

խրատ՝ որ այլ առաւել ՚ի նոյն կենայ :
(Կուլութեանն ամենեւին տեղի ոչ
տալ :

Իւրաքանչէր ի կրթութիւն ման-
կանն այս է , որ ՚ի յարակցութիւնն՝ նու-
ցա որոց գործն ՚ի յապականութիւն կու-
հայի , զգուշանալ ՚ի խաղ և յել և ՚ի
նիստ : (Ի հոգի մանկանն տակաւին
անգիծ է , և ընդունակ է կերպի առա-
ւել քան զհամահասակն իւր . պարտ
է զնա ՚ի տեսակ մարգարէութեանցն՝
սպաստացուցանել , մանաւանդ ՚ի քարա-
մաթ , որ ՚ի խելս և ՚ի յընտրողութիւնս
և ՚ի հաւատարմութիւնս և ՚ի պարկեշ-
տութիւնս արժանաւոր են , և յոչ յայն
որ ՚ի գանձս կամ յազգս վերաբերի :

Յետոյ զճանապարհս և զշաւերս
հաւատոցն նմա ուսուցանեն , և զնա
՚ի պահպանութիւնն մին յօժարեցրնեն ,
և յորժամ ՚ի հաւատոյն երես դարձը-
նէ , յանդիմանեն զնա . զբարիսն առա-
ջի իւր գովել , և զվատթարսն պարսա-
ւել : Եւ եթէ գործ բարի ինչ ՚ի նմանէ
յայտնի , զայն գովել . և եթէ սակաւ
ինչ անկարգութիւն յայտնէ , յանդի-
մանութեամբ և սպառնալեօք ուղղել :

Եւ զանպարկեշտ ուտել և ըմպել ,
և զհանդերձս փափուկս և զարդարունս
յաչս նմին արհամարհ ցուցանել . և
բառնալ ամենեւին զհոգի նորա ՚ի մար-
մնաւոր փափկութեանց , և ասել նմա
թէ բազմերանգ հանդերձ և նկարէն
գործած՝ կանանց է վայելուչ , և ոչ ա-
րանց , զի մեծազարմն ՚ի հանդերձն ոչ
հայի : Եւ յորժամ յայն վարժի , և լսե-
լիք նորա այնու լցուի , վասն կրկնելոյ
բողո՞ւմ անգամ բանիցն , յայնժամ նմա
սովորութի դառնայ . և սովորութիւնն
երկրորդ բնութիւն է ըստ իմաստնոցն :

Եւ նոքա որ հակառակին այսմ խրա-
տու , ՚ի նոցանէ պատրաստ՝ պահել
զտղայսն :

ՈՍԿԻՓՈՐԻԿ 4


1 Կենակցութիւն կամ ընտանութիւն :
2 Կ'երկնայ թէ բերմունք ըսել կ'ուզէ , նոյն
պէս այլազգական բառովն ալ :
3 Զգուշացրնել , էտ կեցրնել :
4 Այս Ոսկիփորիկը գրուած է ժ'ի գարուն
հոգեբը :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ողբ* Ժանկան որբոյ :

Ս ԵՅ ինձ եղո՞ւկ տառապելոյս
Ի ծընողաց լըքեալ անյոյս .
Իցէ՞ բնաւին քան զիմս յերկրի
Դառն հանդիպեալ որ աղետի :
Ողբ նախ բացին զհամբ իմ բերան
Եզուս ՚ի դառն յեղաւ կական .
Եսխ քան լուսոյ՝ զաչս արտասուաց
Իման ծանեայ խաւարազգած .
Փոխան կոչոյ նախ ըզմայրիկ
Որք զիս լսել վարժեցուցիք .
Չեւ ըզկաթին առեալ ճաշակ
Ս իշտ դառնութեան ճաշեցի յագ .
Փոխան ըստեանց դառն արտասուք
Ինձ եղկելոյս եղէն սընունդք :
Ի փարելին մայրական գիրկ
Չըհանգեայ բնաւ տրղայս փափկիկ :
Գողտրիկ անդամբս ոչ զըզուեցան
Ճապուկ մատամբք ծընողական ,
Չաղիկ երեսք իմ կարմրեւրանդ
Չառին համբոյր խանդաղատանք :
Ոչ ինձ ՚ի նինջ անդորրական
Հրաւէր կարդայր ձայն ըզձական .
Եւ իմ կականք զիս որբէին
Եւ դառն բուն ինձ կոչէին .
Ի գիշերի երբ զարթնուի
Կաթնածարաւ ճիչ բառնայի ,
Եւ ոչ ինձ մայր ընդոստ դիմէր
Եւ քաղցրաբուզի կաթն ջամբէր :
Հասեալ յարբունս արդ մանկութեանս
Ո՛ւր իմ ծընողս գոչեմ մարդկան .
Ո՛ւր իմ մայրիկ որ ետ ինձ լոյս
Ս ՚ի ես անծին եմ ինքնաբոյս :
Են և հաւուց մարք ըզձալի
Եւ յարկ և բոյնք են հայրենի ,
Գիտեն իսկ գոռ վայրի գազանք
Ի զմայրենի սիրոյն ճաշակ .
Ե՛ր եղկելոյս հաւուցդ հանդոյն
Չեն խանդակաթ ծընողք սիրուն .
Ի զձեզ թրուունք զըւարթադէմ
Ինչ թեօք մարցի երբ տեսանեմ ,



J. Fuchs'sche Verlagsanstalt

Վառինք , ըզձեզ 'ի մարմննդի
 Երբ տեսանեմ մարցդ առ երի
 Խայտալ թընդալ ոստոստերով
 Եւ անուշակ բառաջերով ,
 Ելի արտօսր յաչացս հոսի
 Եւ թաղծուծիւն զինև պատի ,
 Բարձրակական զայերս լընուն
 Լ'նմրեիծար սղոցս հընչիւն :
 Տըղայս 'ի գիրկ զըգուիլ 'ի մարց
 Երբ տեսանեմ գորովազգած
 Եւ արտասուօք բերկրապատար
 Սօր առ մանկիկ համբոյրրս տալ ,
 Լ'՛հ սիրտս յալիս ցաւոց ծըփի
 Յուխ արտասուաց աչքս հեղձանի :
 Բարբառ մանկանց որ մայր ձայնէն
 Սուր ինձ սըլաք 'ի սիրտ մըխէն :
 Ի զուր ես որբըս սրտաբախ
 Սընամ 'ի մէջ մանկանց մատաղ ,
 Թ' իցէ արդեօք մարցն 'ի միջի
 Որ ձայնիցէ զիս իւր որդի :
 Ս'ինչ տըղայոց խաղքն աւարտին
 Քրտնալաստակ ամենեքին ,
 Վիմեն 'ի գիրկս իւրեանց ծնողայ
 Սընջէլըզերմ քիրտն երեսայ ,
 Ես տապակէզ 'ի մէջ դաշտի
 Յիմ ընկերացըս մեկուսի ,
 Լամ 'ի մօրէ անլուր անկոչ
 Եւ նըւաղիմ սիրտ 'ի յոգւոջ :

ՅԱՌՈՒԹԻՒՆ ՃԵՊԵՃԵԱՆ

Լ'յս զգայուն սրտի գեղեցիկ թելա-
 դրուծիւնը կը յիշեցնէ մեզի Քրքը-
 հուայթ Լ'նգղիացի բանաստեղծինը ,
 որն որ խաղական թարգմանութենէն
 այսպէս 'ի հայ դարձուցեր է հիմկու
 Ռաֆայէլեան Սարժարանին յառա-
 ջադէմ ուսանողաց մէկը :

Սանուհ Բափառան :


ՅՈՐԺԱՍ հողմն ձմեռնային հնչէ 'ի
 հովիտս լերանց և շինական գուհիկ
 աղէն զդուռն ընդդէմ մուրացիկն , յոր-
 ժամ արտասուք սառնորակք երերան
 յանմիծար աչկունս իմ , ո՛հ քանի
 դառն է յայնժամ բաղդ թափառական
 մանկին :

Սառնակառոյց է ձմեռն , և ես չու-
 նիմ հանդերձիկ , և սիրտ իմ պաղեալ
 է 'ի ծոցի իմում : Չունիմ ես հայր և
 մայր , և ոչ մերձաւոր զոք . քանզի թա-
 փառական եմ ես մանուկս որբիկ :

Սակայն էր և իմ տուն , և հայր և
 մայր սիրասուն և քաղցրալուր ըզձից
 իմոց մանկականաց : Տնակ մեր ծած-
 կեալ էր 'ի դարարագեղ և 'ի կանաչա-
 զգեստ ձորակի միջ , ուրանօր հեծէր
 աղաւնեակն զերգ իւր գորովաղէտ :

Բայց հայր և մայր իմ կոչեցան ան-
 դուստ , և լքին զիս 'ի խաղալիկ ան-
 գութ և անգորով օտարաց : Թափա-
 ռական եմ ես մանկիկ թշուառ :

Վառնաշունչ են օդքս , և ձիւն սաստ-
 կացուցանէ զհողմն բքաբեր , և չիք
 ոք որ ունին մատուցանիցէ արտասուա-
 հայց և կարեվէր վշտիս : Երթայց ու-
 ըեմն 'ի գերեզմանս , ուր դնին ծնողք
 իմ , և մահ լիցի միակ բարերար թա-
 փառականս մանկան :



ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ Բ ՀԱՅՈՑ

Բ .

Վրասի Բ Տեֆրանայ , և Թափ հայկական :

Լ'ՅՍ տախտակիս վրայ երեցած 3 ,
 4 ու 5 թիւ պատկերները , որոնց վրայ
 միայն կ'ուզենք խօսիլ աս անգամ , են
 մեր Բ Տեֆրան Լ'ըշակունի թագաւո-
 ըին դրամներէն ոմանց պատկերները ,
 որոնց վրայ տեղն 'ի տեղը խօսիլը քաջ
 դրամագիտաց թողլով , մենք մեր չա-
 փովը կը հրատարակենք անոնց՝ որոնց
 ազգասիրութեան ծարաւը բաժակով
 մ'ալ կշտացընելը միշտ հաճոյ պաշտօն
 մը կատարել կը սեպենք . և միայն պատ-
 կերներն ալ անուշով ցուցընելը անոնց՝
 որ ամենեւին չեն տեսած մեր քաջ և
 մեծ նախնեաց յիշատակարանները՝ կար-
 ծեմք որ մեծ զուարճութեան պատճառ
 կ'ընծայէ . մանաւանդ մեր Բ Տեֆրա-
 նայ դէմքը տեսնել՝ պատմութեան տա-